

«ԲԱՏՈՒԼԱ» ԾԻՍԱԿԱՆ ՊԱՐԵՐԳԻ ԵՐԳԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԵՎ ԱՐԴԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ *

Հղման համար. Սարգսյան, Մարգարիտ: ««Բատուլա» ծիսական պարերգի երգային ավանդույթը և արդի փոխակերպումները»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2022): 104-128. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-104

«Բատուլա»-ն հնագույն ծիսական-հարսանեկան պարերգ է, որը հայկական ավանդական հարսանիքում կատարել են հատկապես «ծաղկոց տանը»՝ նորահարսի ընկերուհիները, իսկ հետագայում՝ ավանդույթի մոռացման արդյունքում սկսել են կատարել տարբեր աղիթներով՝ ուրախ հավաքույթների ժամանակ: Մեր օրերում այն տարածված է Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում և Վրաստանի Հանրապետության հայաբնակ Ջավախքում:

Պարերգը ճանաչելի է երաժշտական տաղաչափության դիպիրիխի/ամֆիմակր կայուն բանաձևով, որով նաև զուգահեռվում է հարսանեկան ծիսական մեկ այլ՝ «Թամզարա» պարերգի հետ: Քննության առնված բոլոր օրինակները միևնույն երգի տարբերակներ են:

Բանալի բառեր՝ «Բատուլա», ծիսական պարերգ, տարածաշրջան, անվանում, բանաստեղծական տեքստ, երաժշտություն, տարբերակներ:

Ներածություն

Հոդվածը նվիրված է հայկական հնագույն «Բատուլա» պարերգին, որի տարբերակներն այսօր կարելի է հանդիպել Հայաստանի տարբեր բնակավայրերում՝ ավանդական տոների և առօրյա հավաքույթների ընթացքում:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ծայնադարանում, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ֆոլկլորի ամբիոնի ծայնադարանում պահվող գիտաշավային նյութերը, Սրբուհի Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» հիմնարար աշխատության առաջին հատորում [10] ընդգրկված նյութերն ու մեկնաբանությունները, ինչպես նաև՝ մեր դաշտային աշխատանքների ընթացքում բանասացներից գրանցված բանավոր տեղեկություններն ու պարերգի տեսագրությունները:

Հետազոտության նպատակն է ներկայացնել հայկական ավանդական հարսանեկան ծեսում լայնորեն տարածված «Բատուլա» պարերգի ընդհանուր բնութագիրը, բանաստեղծական տեքստում կրկնակ-խաղիկ փոխհարաբերության, մեղեդիական կառույցի, չափակշռության (մետրադիոմական), ծայնակարգային և երաժշտական տաղաչափության առանձնահատկությունները:

Պարերգի բնութագիրն ու մեկնաբանությունները

«Բատուլա»-ն հայկական հնագույն ծիսական պար է, որ կատարել են ավանդական հարսանիքների, հետագայում՝ նաև այլ ժողովրդական տոների,

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող, margfolk63@gmail.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 12.09.2022, գրախոսելու օրը՝ 01.09.2022, տպագրության ընդունելու օրը՝ 15.12.2022:

հավաքույթների ժամանակ: Պարի հնագույն ծագման և ծիսական բնույթի մասին վկայում են էթնոպարագետ Սրբուհի Լիսիցյանի հետևյալ տողերը. «...ձախ, աջ, ձախ, աջ ցատկերի ժամանակ կտրուկ ճոճումները, անկախ նրանից մեկ ոտքով թե զույգ ոտքով են կատարվում ցատկերը, վկայում են այն մասին, որ Բատոլա շուրջպարը պտղաբերման և աճի ծեսերի մնացուկներից բացի, որոնց պատկանում են ճոճումները, կարող է իր մեջ նաև բովանդակություն պարունակել: Հավանաբար այստեղ գործ ունենք նաև ոստոստել-ու՝ որևէ թռչնի ցատկոտելու նմանակման, կամ էլ օդում որևէ առարկայի ճոճումների պատկերման հետ» [10, էջ 388]:

Ըստ Մարտունու և Ապարանի շրջաններում էթնոերաժշտագետ Հ. Պիկիցյանի գրանցած գիտարշավային նյութերի՝ «Բատոլա»-ն հարսանեկան պարերգ է: 2004 թ. մեր դաշտային հետազոտությունների ընթացքում տեսագրած նյութերը ևս փաստում են, որ այս պարերգը կատարել են ինչպես հարսանիքներին, այնպես էլ այլ առիթներով՝ ուրախ հավաքույթների ժամանակ (Քասախի բնակչուհի Լենա Գևորգյան, 78 տ.): Հարսանեկան ծեսում այն կատարել են հատկապես «ծաղկոց տանը»՝ նորահարսի ընկերուհիները:

Մյուս բանասացները չեն նշում, թե ինչ առիթով և երբ է կատարվում սույն պարատեսակը, ինչն էլ վկայում է «Բատոլա»-ի, ինչպես և առհասարակ ավանդական պարերի, երբեմնի ծիսական պատկանելության մոռացության և ավանդույթի նահանջի մասին: Այդուհանդերձ, նշված պարերգը բավական տարածված է Հայաստանի տարբեր մարզերում՝ Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Վայոց Ձորում, Արարատում և Վրաստանի Հանրապետության հայաբնակ Ջավախքում: Հայտնի է տարբեր անվանումներով՝ «Բատոլա», «Բաթոլա», «Բատալո», «Բատոլո», «Բաթ Օլա», կատարում են թե՛ իբրև պարերգ՝ երգն ու պարը միասին, թե՛ առանձին-առանձին՝ իբրև պար կամ երգ: Այն շուրջպար է, որին կարող են մասնակցել երկու սեռի երիտասարդներն ու տարեցները: Մասնակիցների դասավորությունը շրջանաձև կամ կիսաշրջանաձև է, ձեռքերը միացվում են ճկույթներով: Պարաքայլերը «Երկու գնալ, երկու դառնալ» հիմնական պարատեսակի տարբերակներ են: Երաժշտական և պարային ֆրագները համաչափ են, փոխհամաձայնեցված: Նշենք, որ ժողովրդական որոշ այլ շուրջպարերի դեպքում այս համաչափությունը կարող է խախտված լինել:

«Բատոլա» բառի բացատրության վերաբերյալ տեղեկությունները շատ սուղ են, սակայն՝ հավանական: Սրբուհի Լիսիցյանը գրում է. «Անգին Աբրահամյանը ցուցադրեց Ապարանի շրջանի Բատոլա շուրջպարը: Անվանումը վերծանել չհաջողվեց: ...Կրկներգում «Բատոլա»-ն կիրառվում է որպես անձնանուն, տղամարդու թե կնոջ՝ հայտնի չէ» [10, էջ 389]: Մեր դիտարկած տարբերակներից մի քանիսում ևս «Բատոլա»-ն կիրառվում է որպես անձնանուն (տե՛ս օր. 11).

Ես Բատալոյ զորքից եմ,
Տժվածանի զորքից եմ:
Մեր Բատալոն խիվանդ ա,
Երկու խնձորի բանդ ա:

Էթնոպարագետ Նաիրա Կիլիցյանը նշում է, որ հայկական «Բատուլա»-ին շատ նման պոնտական «Պատուլա» պարում Պատուլա-ն աղջկա անուն է¹: Այսպիսով, «Բատուլա»-ն ևս կարելի է մեկնաբանել որպես անձնանուն, որը բանավոր փոխանցման ընթացքում տարբերակվել է:

Նկատի ունենալով «Բատուլա»-ի տարբերակների միջև ոչ մեծ և էական փոփոխությունները, առանձնացրել և քննության ենք առել պարերգի 14 նմուշ: Անշուշտ, նշված քանակով չի սահմանափակվում այս պարերգի տարբերակների թիվը, սակայն տվյալ երգատեսակի առանձնահատկությունները դուրս բերելու համար մեր դիտարկած նմուշները միանգամայն բավարար են²:

Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել.

Ա. պարերգի ամբողջական տեքստով (երգ-պար-խոսք) գրառված, Սրբուհի Լիսիցյանի նշված աշխատության առաջին հատորից մեկ նմուշ՝ մանրամասն տեղեկություններով [10, էջ 388-389] (օր. 1), երաժշտագետ-բանահավաք Անահիտ Գևորգյանի անձնական հավաքածուից երկու նմուշ [7, էջ 31, բանասաց՝ Բ. Մնացականյան, գ. Քասախ, էջ 71, բանասաց՝ Խ. Դավթյան, գ. Մոավյան, վերծանությունը՝ Ա. Գևորգյանի] (օր. 3 և 4), ինչպես նաև մեր գրանցած և վերծանած պարերգի մեկ նմուշ՝ (օր. 2):

Բ. առանց պարային տեքստի (միայն՝ երգ-խոսք) ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ծայնադարանից (այսուհետ՝ ԱԻՁ) Հակոբ Գրքաշարյանի հավաքածուից երկու նմուշ³ (օր. 7 և 8), ԱԻՁ Քրիստափոր Կուշնարյանի հավաքածուից երկու նմուշ (օր. 9 և 10), որոնցից մեկը՝ հրատարակված [1, էջ 133]: Ի դեպ՝ վերջինները տվյալ պարերգի ամենավաղ գրառումներից են՝ ծայնագրված 1927 թ. Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում (նախկինում՝ Գյոզալդարա): Վասպուրականի նահանգից ծայնագրված երկու նմուշ [2, էջ 169, բանասացներ՝ Արեգ Գասպարյան, Սերոբ Վարդանյան] (օր. 5 և 6), ՀՀ Անիի շրջանի գիտարշավային գրառումներից մեկ նմուշ [6, էջ 82, բանասաց՝ Անահիտ Հակոբյան] (օր. 13), Մարգարիտ Սարգսյանի Մարտունու հավաքածուից մեկ նմուշ՝ (օր. 1) և Սրբուհի Լիսիցյանի Արթիկի գիտարշավային նյութերից մեկ նմուշ [3, էջ 103, բանասաց՝ Հերիքնազ Հարթենյան] (օր. 14):

Գ. պարեղանակի վոկալ կատարում՝ Վասպուրականի մշակույթից [1, էջ 193, բանասաց՝ Սերոբ Վարդանյան] (օր. 12):

¹ «Արևմտյան Պոնտոսում տարածված Պատուլան Արևելյան Պոնտոսում անվանում են Պիպիլոմատենա (Πιπιλομάταινα): Պատուլա անվանումը տարբեր մեկնաբանություններ ունի, սակայն հիմնականում կապվում է աղջկա անվան հետ, որի վկայությունն է սիրային-կատակային երգը» [8, էջ 137]:

² Հնարավորության դեպքում «Թամզարա»-ի տարբերակների հետ մեկտեղ, ամբողջական ժողովածուի տեսքով կներկայացնենք սույն ուշագրավ պարերգի մեր ձեռքի տակ եղած բոլոր տարբերակները:

³ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ծայնադարան, Հ. Գրքաշարյանի հավաքածու, տ. 271, թ. 8, բանասաց Կոստանյան Յազո, տ. 274, թ. 2, բանասաց՝ Նավոյան Աստղիկ, վերծանությունը՝ Մ. Սարգսյանի:

Բանավոր տեղեկություններ են հաղորդել՝ Ապարանի շրջանի Մելիք գյուղից Լենա Գևորգյանը, ծնունդով Գյումրիից՝ Անահիտ Մառանջյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատողներ՝ էթնոերաժշտագետ Հռիփսիմե Պիկիշյանը և երաժշտագետ-ֆոլկլորագետ Զավեն Թագակչյանը, ինչպես նաև՝ երաժշտագետ-ֆոլկլորագետ Լուսինե Նազարյանը:

Աշխատանքի վերջում ներկայացված են վերոհիշյալ բոլոր նմուշները՝ նուստագրված և բանաստեղծական տեքստերով: Օրինակները դասավորված են ըստ ծայնակարգային պատկանելության:

«Բատոլա»-ի բանաստեղծական կառույցի քննություն

Բոլոր տարբերակներն ունեն ավանդական պարերգերին բնորոշ կրկնակ-խաղիկ փոխհարաբերությունը, և որպես երգի անվանում վերցված է կրկնակի առաջին բառը: Կրկնակը բոլոր տարբերակներում գրեթե նույնն է, աննշան փոփոխությունները պայմանավորված են վերծանողի տրամաբանությամբ կամ բանասացի մեկնաբանությամբ: Այսպես՝ կրկնակի երկրորդ տողում «Շաքարու շար, Բալոլա» տողը մեկ այլ տարբերակում փոխակերպվում է «Շաքար ու շարբաթ օլա»-ի, որտեղ օլա-ն Բալոլա բառի հետ հարմարեցրած ծայնարկություն է:

Բատոլա ջան, Բատոլա,

Շաքարու շար, Բատոլա: /բանասաց՝ Անգին Աբրահամյան, օր. 1/

Կամ

Բատոլա ջան, Բատոլա,

Շաքար ու շարբաթ օլա,

Բատոլա ջան, Բատոլա,

Լուսնակն անուշ կցոլա: /բանասաց՝ Անահիտ Մառանջյան, օր. 2/

Որոշ տարբերակներում (տե՛ս նաև վերը նշված օր. 2), կայուն երկտող կրկնակին ավելանում են նոր տողեր⁴ (նոր տողերը բանաստեղծական տեքստում գրված են շեղագիր)

Բատոլա ջան, բատոլա,

Շաքար ուրող շան փղա,

Բատոլա ջան, բատոլա,

Շաքար ու շար, բատոլա: /բանասաց՝ Խաչիկ Դավթյան, օր. 4./

Կրկնակն ավանդական պարերգերում հաճախ հանդիպող 7 վանկանի երկտող կամ քառատող է՝ խաղիկների հետ դասավորված տողընդմեջ կամ երկու տողընդմեջ: Խաղիկները, ինչպես և կրկնակը, մեծ մասամբ երկտող են, ավելի քիչ՝ քառատող, բովանդակությամբ՝ կատակային-սիրային են, այդուհանդերձ՝ յուրաքանչյուր տարածաշրջանում կան առավել սիրված և նախընտրելի խաղիկներ:

Երբեմն, բանասացի անփորձության կամ անվարժության արդյունքում, բանաստեղծական տեքստի կառույցում կրկնակ-խաղիկ հարաբերակցությունը խախտվում է: Այսպես, 1927 թ. Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում⁵ հովիվ Խաչատրյանից (16 տ.) Քրիստափոր Կուշնարյանի ծայնագրած տարբերա-

⁴ Հիմնական երկտող կրկնակին հավելված նոր տողերը գրված են շեղագիր:

⁵ Նախկին անվանումը՝ Գյոգալդարա:

կում (օր. 10) կրկնակի և խաղիկների փոխհարաբերությունը հստակ չէ. առաջին տան 6 տողերից 1-ին և 4-րդ տողերը կրկնակային տողեր են, ընդ որում՝ երկու դեպքում էլ հնչում է կրկնակի միայն առաջին տողը.

Բատուլ ջանը⁶, Բատուլ,
Ուր գնացիր, ուր եկար,
Դուն իմը սրջտինը դուր եկար,
Բատուլ ջանը, Բատուլ,
Ուր գնացիր, ուր եկար,
Դուն իմը սրջտինը դուր եկար:

Երկրորդ տան 6 տողերից 1-ին և 2-րդ տողերում հնչում է պարզապես մեղեդին առանց կոնկրետ բառերի՝ որպես նվագարանային մաս, 3-րդ և 4-րդ տողերում հնչում է խաղիկը, 5-րդ և 6-րդ տողերում հնչում է կրկնակը, հայդմ՝ 6-րդ տողի բառերը վերցված են 1-ին տան խաղիկից.

Դամ, տիրը, նարա, նիրը, նարը, նանի,
Տի, նարի, նարի, նարի, տանայ, նանայ:
Գնա, արի, ման արի,
Խնծոր քաղեմ, յան արի,
Բատուլ ջանը, Բատուլ,
Դուն իմը սրջտիկը, Բատուլ:

Երրորդ տան 6 տողերից 4-ը՝ 1-ինը, 2-րդը, 5-րդը և 6-րդը հնչում են առանց կոնկրետ բառերի՝ որպես նվագարանային մաս, իսկ 3-րդ և 4-րդ տողերը ամբողջական կրկնակն է՝ ավանդական տեքստով:

Տայ, նարի, նարի, նարի, նանա, նայ, տի, նայնամ,
Տիր, նարա, նիրը, նանայ, նամ:
Բատուլ ջանը, Բատուլ,
Շաքար ու շերբաթ օլա:
Տամ, տիրը, նարա, նիրը, նանամ, նայնամ
Տայ, նարի, նարի, նարի, տարի, նայնայ:

Այսպիսով, գործ ունենք մի անսովոր տարբերակի հետ, որտեղ ավանդական բանաստեղծական կառույցը խարխվել է՝ ենթադրաբար երգասացի տարիքի և անփորձության հետևանքով: Նման տարբերակները հազվադեպ են:

Պարերգի երաժշտագիտական քննությունը

1. Խառը չափակարգ (մետր) ունեցող պարերգ է. դիտարկվող բոլոր նմուշներում կանոնավոր ներտակտային բաժանման արդյունքում մետրը ստացվում է.

ա. մեջընդմիջվող. 9/8 (4/8+5/8) չափով 12 նմուշ, որոնցից միայն մեկում՝ Բ. Կուշնարյանի գրառած Մարտունու տարբերակում (օր. 9) առաջին նախադասությունը 4/8+6/8 ներտակտային բաժանում ունի, իսկ շարունակությունը մինչև վերջ՝ 4/8+5/8: Ամենայն հավանականությամբ բանասացը մի փոքր ձգելով է

⁶ Շեղագրով գրված ը ձայնավորները բանասացի կողմից ավելացրած հնչյուններ են, որոնք կիրառվում են երկու բառերն իրար կապելու կամ տողի վանկաչափը պահելու համար (5, էջ 9): Երբեմն էլ դա պարզապես բանասացի երգելու կերպն է, որն առհասարակ բնորոշ է ժողովրդական երգեցողությանը:

սկսել, երևույթ, որ բնորոշ է առհասարակ. երգը սկսելիս՝ տոնայնությունը կամ մետրը որոնելով բանասացը մեկ-երկու տակտ կարող է խարխալել:

բ. մեջընդմիջվող. 9/4 (4/4+ 5/4) չափով 1 նմուշ (օր.1): Տվյալ դեպքում 9/4 մետրի ընտրությունը լոկ վերձանողի նախընտրությունն է եղել: Ըստ իս՝ նպատակահարմար կլիներ ընտրել 9/8 մետրը:

գ. մեջընդմիջվող. 10/8 (4/8+6/8) չափով 1 նմուշ (օր. 10), որը հավանաբար բանասացի «քմահաճ» կատարման արդյունքն է. պարերգը կտրված է իր գործառույթից՝ կատարվում է առանց պարի. նման դեպքերում երգասացը կարող է պարին բնորոշ մետրը չզգալ: Տվյալ դեպքում՝ 4/8+5/8-ի փոխարեն պարերգը կատարվել է 4/8+6/8 մետրով:

2. «Բատոլա» պարերգին բնորոշ է մեջընդմիջվող 9/8(4/8+5/8), 9/4 (4/4+ 5/4) մետրական հիմքով երաժշտական տաղաչափության դիափրիքի/ամֆիմակր բանաձևը, որով պարերգը ճանաչելի է նույնիսկ առանց մեղեդու.



Հենց այս բանաձևով և 9/8 (9/4) մետրով խնդրո առարկա «Բատոլա» ծիսական պարերգը հաճախ զուգահեռվում, երբեմն նաև նույնացվում է ավանդական հարսանիքում տարածված ու սիրված մեկ այլ՝ «Թամզարա» պարերգի հետ: Կենցաղավարման ընթացքում նկատելի է հետևյալ փոփոխությունը. «Բատոլա»-ի մեղեդուն միանում է «Թամզարա» պարերգի կրկնակի տեքստը.

Թամզարա հայ, Թամզարա,
Ինչ բան ասես, հըմեն կա⁷:

Նկատենք, որ «Թամզարա» պարերգը «Բատոլա»-ի հետ նշված տաղաչափական նմանությունից զատ՝ ունի բազմաթիվ տարբերություններ [9, էջ 188-204]:

3. Դիտարկած նմուշների մեծ մասը միևնույն մեղեդու տարբերակներ են՝ առավելապես էոլական ձայնակարգային դրսևորումներում.

ա. էոլական⁴ հնգալարում ծավալվում է 6 նմուշ (օր. 1՝ Ապարան, օր. 2՝ Շիրակ, օր. 3՝ գ. Քասախ, օր. 4՝ գ. Մռավյան, օր. 5՝ Վասպուրական, օր. 6՝ Վասպուրական, Վարդենիս): Մռավյանի տարբերակում V աստիճանը հանդես է գալիս որպես զարդարող հնչյուն՝ նախշլագ, բայց բոլոր տակտերում ակտիվ առկայության պարագայում այն ձեռք է բերում ձայնակարգում գործառութային նշանակություն:

⁷ 2002 թ. ավանդական երգի և պարի «Կարին» համույթի երգացանկի համար երաժշտագետ Լուսինե Նազարյանը «Թամզարա»-ի երեք տարբերակ համադրելով ստացել է այդ պարերգի նոր՝ համերգային հետաքրքիր տարբերակ, որը հետագայում տարածվել է և 2014 թ. ընդգրկվել հանրակրթական դպրոցների «Ազգային երգ ու պար» առարկայի 5-րդ դասարանի ծրագրում: Այս տարբերակի կրկնակի մեղեդին «Բատոլա»-ի կրկնակի մեղեդին է: Լ. Նազարյանն այս տարբերակը վերցրել է կոմպոզիտոր, երգիչ, բանահավաք Կարո Չալիկյանի անձնական գիտարշավային նյութերից, որտեղ այն գրառված է «Թամզարա»-ի խոսքերով:

բ. էոլական⁵ հնգալարում (կվինտա)՝ 2 նմուշ (օր. 7՝ գ. Վարդենիս, օր. 8՝ գ. Ակունք):

գ. հիպոէոլական⁴ վեցալարում (սեքստա)՝ 4 նմուշ (օր. 9՝ Գեղարքունիք, օր. 10՝ Գեղարքունիք, օր. 11՝ Գեղարքունիք, օր. 12՝ Վասպուրական), որոնցում հիմնաձայնից ցած գտնվող VII աստիճանը հանդես է գալիս միայն ավարտներում և կիսավարտներում (բացառությամբ՝ 33-րդ տակտի), ամրապնդելով հիմնաձայնի դերը:

Առանձին անդրադառնանք այս ձայնակարգում ծավալվող պարերգի նվագարանային տարբերակին, որը սակայն գրառվել է վոկալ կատարմամբ (օր. 12՝ Վասպուրական): Երաժշտագետ Զավեն Թագակչյանը գրում է. «Մեղեդու կառույցը պարերգից տարբերվում է երկմաս կառուցվածքով: 1-ին մասի մեղեդին մոտ է մեկ մասանի կառուցվածք ունեցող թիվ 179-ին (մեր հոդվածում՝ օր. 6: Ի դեպ՝ այս երկու օրինակն էլ գրանցվել է նույն բանասացից՝ Սերոբ Վարդանյանից, Մ. Ս): Երկրորդ մասում նախընթացին հարիր նոր մեղեդի է շարադրված, որը համադրվելով 1-ին մասի էոլական միևնույն, սկսվում է եռյակ վեր իոնական մաժոր ձայնակարգում և միայն պարբերության ավարտին զարտուղվում 1-ին մասի ձայնակարգ-տոնայնություն» [2, էջ 229]: Ձայնակարգում նմանօրինակ շեղումները, երբ առաջին մասում օժանդակ հենակետ հանդիսացող 3-րդ աստիճանը երկրորդ մասում ստանձնում է ժամանակավոր հիմնաձայնի դերը, հաճախ են հանդիպում: Սակայն սա ընդամենը շեղում է, ուստի դժվար է տվյալ տարբերակի ձայնակարգը դիտարկել որպես փոփոխական: Ի դեպ այս իմաստով նշված տարբերակը զուգահեռվում է «Թամզարա»-ի որոշ տարբերակների հետ [9, էջ 194]:

դ. «Բատուլա» պարերգին բնորոշ էոլական ձայնակարգային ընդհանուր օրինաչափությունից դուրս են մնում մեր կողմից դիտարկված երկու նմուշ (օր. 13՝ Անի և օր. 14՝ Արթիկ): Անիում գրառված օրինակը ծավալվում է հիպոիոնական³ հնգալարում, սակայն հիմնաձայնից ցած վեցերորդ աստիճանը հնչում է միայն ամենասկզբում, կարծես երգասացի կողմից տոնայնությունը փնտրելիս, իսկ հիմնաձայնից ցած՝ 7-րդ ձգտող աստիճանը հնչում է մեկ անգամ՝ հպանցիկ, որպես ֆորշլագ, այսինքն՝ այս երկու հնչյունները ձայնակարգային որևէ գործառույթ չեն կրում: Հետևաբար կարելի է նշված օրինակի ձայնակարգը համարել իոնական³ եռալարը:

Հաջորդ՝ Արթիկի տարբերակը (օր. 14) ծավալվում է փոփոխական՝ հարմունիկ և էոլական հնգալարում, միևնույն հիմնաձայնով⁸: Մեղեդու վարընթաց շարժման ժամանակ ձայնակարգը հարմունիկ է՝ III և IV աստիճանների միջև 1,5 տոնով, իսկ վեր ընթանալիս՝ էոլական: Նշված տարբերակը կատարել է արթիկցի հայտնի բանասաց Հերիքնազ Հարթենյանը, որի յուրօրինակ կատարումներին նախկինում անդրադարձել ենք: Նրա մեկնաբանումներն առհասարակ

⁸ Այս նմուշը ժամանակին վերծանվել է առանց պլտերացիայի նշանների և այդպես էլ հրատարակվել է 2010-ին «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի 6-րդ պրակում: Հետագայում՝ սույն ուսումնասիրության համար կրկին անդրադառնալով հրատարակված օրինակներին և լսելով ձայնագրություններն, այս նմուշում կատարել ենք ուղղումներ՝ 3-րդ և 4-րդ աստիճանների մոտ ավելացնելով պլտերացիայի նշաններ:

կրում են բանասացի ստեղծագործ անհատականության դրոշմը՝ հաճախ դուրս գալով տվյալ երգի կամ պարի տիպական առանձնահատկությունների սահմաններից [9, էջ 195]: «Բատոլա»-ի պարագայում գործ ունենք Հերիքնազ Հարթենյանի ինքնատիպ և անսովոր տարբերակի հետ. բանասացի ստեղծագործ մոտեցման արդյունքում նկատվում է ավանդույթի աստիճանական նահանջի փաստը⁹: Ըստ երաժշտագետ Անահիտ Գևորգյանի՝ այսպիսի ծայնակարգային դրսևորումը բնորոշ է ապարանյան շատ այլ պարերգերի, բայց ոչ «Բատոլա»-ին:

Այս պարերգին բնորոշ ծայնակարգային և կառուցվածքային ընդհանուր առանձնահատկություններից շեղվող փոքրաթիվ տարբերակներ կան նաև այլ ժողովածուներում, որոնց կանդրադառնանք առանձին հոդվածով:

4. «Բատոլա»-ի գրեթե բոլոր տարբերակներում կրկնակն ու խաղիկներն ունեն միևնույն մեղեդին, բացառությամբ ավարտների. կենտ տողերը, անկախ նրանից, կատարվում է կրկնակը թե խաղիկը, ավարտվում են օժանդակ հենակետ հանդիսացող 4-րդ աստիճանով, իսկ զույգ տողերը՝ հիմնածայնով: Հազվադեպ մեղեդու զարգացման նման տրամաբանությունը կարող է խախտվել. քասախցի բանասաց Լենա Գևորգյանի տարբերակում հիմնօղակի առաջին և երկրորդ տակտերը տարբեր են, կենտ տողերն ավարտվում են ոչ թե օժանդակ հենակետ հանդիսացող 4-րդ աստիճանով, այլ՝ երկրորդ աստիճանով, որը մծց. 2 քայլով սահուն անցում է կատարում դեպի զույգ տողերը սկսող երրորդ աստիճան: Այստեղ 4-րդ աստիճանի դերը որպես օժանդակ հենակետ մի փոքր թուլացած է:

Մեկ նախադասության կամ երաժշտական հիմնօղակի (երկու տող կրկնակ կամ մեկ տող կրկնակ - մեկ տող խաղիկ) մեղեդին ծավալվում է երկու տակտի սահմաններում՝ եթե մետրը նշված է 9/8, կամ չորս տակտի սահմաններում՝ եթե մետրը նշված է 4/8-5/8, պարզ մեկմաս ձևում: Հաջորդիվ կրկնվում է միևնույն կառույցը (հաճախ ոչ զգալի ռիթմական կամ ելևէջային տարբերակումներով) այնքան ժամանակ, որքան ցանկանում է բանասացը կամ ընթանում է պարը:

A		A₁		A		B
1 կամ 2 տակտ		1 կամ 2 տակտ	Կամ	1 կամ 2 տակտ		1 կամ 2 տակտ

Հազվադեպ մեղեդու զարգացման նման տրամաբանությունը կարող է խախտվել, եթե մեղեդին կատարվում է առանց խոսքերի, որպես նվագարանային պարեղանակ: Նախորդիվ անդրադարձանք նման մի օրինակի, որտեղ պարեղանակը ընդլայնվելով դարձել է երկմաս [2, էջ 229]:

Եզրակացություն

Այսպիսով՝ «Բատոլա»-ն հնագույն ծիսական-հարսանեկան պարերգ է, որը հայկական ավանդական հարսանիքում կատարել են հատկապես «ծաղկոց տանը»՝ նորահարսի ընկերուհիները, իսկ հետագայում՝ ավանդույթի մոռացման արդյունքում սկսել են կատարել տարբեր առիթներով՝ ուրախ հավաքույթների

⁹ Հարմոնիկ քառալարում է ծավալվում նաև քասախցի բանասաց Լենա Գևորգյանի տարբերակը:

ժամանակ: Մեր օրերում այն տարածված է Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում և Վրաստանի Հանրապետության հայաբնակ Ջավախքում:

Հայտնի է տարբեր անվանումներով՝ «Բատոլա», «Բաթոլա», «Բատալո», «Բատոլո», «Բաթ Օլա», կատարում են թե իբրև պարերգ՝ երգն ու պարը միասին, թե՛ առանձին-առանձին, իբրև պար կամ երգ: Շուրջպարին կարող են մասնակցել երկու սեռի երիտասարդներն ու տարեցները: Պարաքայլերը «Երկու գնալ, երկու դառնալ» հիմնական պարատեսակի տարբերակներ են: Երաժշտական և պարային ֆրազները համաչափ են, փոխհամաձայնեցված:

Բանաստեղծական տեքստն ունի կրկնակ-խաղիկ ավանդական կառույցը, խաղիկները հիմնականում կատակային-սիրային բովանդակությամբ են:

Պարերգի մեղեդին ծավալվում է 9/8 կամ 9/4 խառը մետրի հենքով, էոլական ձայնակարգի տարբեր դրսևորումներում, երկու միանման նախադասություններից բաղկացած մեկմասանի կառույցի սահմաններում: Պարերգը ճանաչելի է երաժշտական տաղաչափության դիպիրիխի/ամֆիմակր կայուն բանաձևով, որով նաև զուգահեռվում է հարսանեկան ծիսական մեկ այլ՝ «Թամզարա» պարերգի հետ¹⁰: Քննության առնված բոլոր օրինակները միևնույն երգի տարբերակներ են:

Դրանցից բացի կան թե՛ գրառված (առանց պարի շարժումների) և թե՛ բանավոր փոխանցված բազմաթիվ տարբերակներ, որոնք տվյալ պարերգին բնորոշ առանձնահատկություններից գրեթե չեն շեղվում, ինչպես նաև ավելի քիչ տարբերակներ, որոնք առանձնանում են ձայնակարգային տարբեր դրսևորումներով (վերջիններիս կանոնադաշտնաբեկ առանձին ուսումնասիրությամբ): Հազվադեպ կարող են հանդիպել «Բատոլա» անվանումով ձայնագրություններ, որոնք սակայն որևէ ընդհանրություն չունեն նշված պարերգի հետ¹¹:

Գրականություն

1. «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշար, պրակ 3, Երևան, «Ամրոց գրուպ», 2008:
2. «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշար, պրակ 5, Վասպուրականի ավանդական երգեր և նվագներ. Երևան, «Ամրոց գրուպ», 2010:
3. «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշար, պրակ 6, Հայ ավանդական պարերգեր. Երևան, «Ամրոց գրուպ», 2011:
4. «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշար, պրակ 9, Ջավախք. Երևան, «Ամրոց գրուպ», 2012:
5. «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշար, պրակ 13, Արամ Քոչարյանի գիտարշավային նյութերի ընտրանի. Երևան, «Ամրոց գրուպ», 2015:

¹⁰ Թամզարայի տարբերակները մեղեդիապես և կառուցվածքով շատ ավելի բազմազան են, երբեմն ունեն եռամաս կառուցվածք, որոշ տարբերակներ, հատկապես նվագարանային կատարումներն ունեն ավելի ծավալուն և բարդ մեղեդի: Այդուհանդերձ՝ երաժշտատաղաչափական բանաձևը կայուն է բոլոր տարբերակներում: Տե՛ս նախորդ հոդումը:

¹¹ 1970 թ. Ջավախքի Աբով գյուղում գրառվել է «Բատոլա» անվանումով այլ պարեղանակ: Հնարավոր է, որ բանասաց Երվանդ Խանջյանը մոռացած կամ սխալված լինի պարի անվանումը նշելիս [4, էջ 99, ձայնագր.՝ Ժ. Խաչատրյանի, վերծ.՝ Զ. Թազակյանի]:

6. Հայ ժողովրդական երգեր և նվագներ, Անի, Ա հատոր, պրակ II. Երևան, «Կոմիտաս», 2010:
7. Հայ ժողովրդական երգեր և նվագներ, Ապարան (2000-2001), պրակ 12. Երևան, «Ամրոց գրուպ», 2015:
8. Կիլիչյան Ն. Հայկական պարերի համանուն պոնտական զուգահեռները, Պատմա-բանասիրական հանդես, 2008, № 2, էջ 131-140:
9. Սարգսյան Մ. Թամզարա. ավանդույթ և արդիականություն, Հայ արվեստի հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 188-204:
10. Лисициан Срб., Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1. Ереван, изд. АН Арм. ССР, 1958.

References

1. "Armenian Traditional Musi" series, issue 3. Yerevan, "Amrots Group", 2008 (in Armenian).
2. "Traditional Armenian Music" series, issue 5. Yerevan, "Amrots Group", 2010 (in Armenian).
3. "Armenian Traditional Music" series, issue 6. Yerevan, "Amrots Group", 2011 (in Armenian).
4. "Armenian Traditional Music" series, issue 9. Yerevan, "Amrots Group", 2012 (in Armenian).
5. "Armenian Traditional Music" series, issue 13. Yerevan, "Amrots Group", 2015 (in Armenian).
6. Armenian Folk Songs and Music, Ani, issue 2. Yerevan, "Komitas", 2010 (in Armenian).
7. Armenian Folk Songs and Music, Aparan (2000-2001), issue 12. Yerevan, "Amrots Group", 2015 (in Armenian).
8. Kilichyan N. Pontic Parallels of the Same-Name Armenian Dances, Historical and Philological Journal, 2008, № 2, p. 131-140 (in Armenian).
9. Sargsyan M. Tamzara: tradition and modernity, Issues of Armenian art. A collection of scientific articles. Yerevan, *Gitutyun* (Science) Publishing House of the NAS RA, 2009, p. 188-204 (in Armenian).
10. Lisician Srb. Ancient dances and theatrical performances of the Armenian people, t. 1. Yerevan, 1958, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Russian).

ПЕСЕННАЯ ТРАДИЦИЯ ОБРЯДОВОЙ ПЛЯСОВОЙ ПЕСНИ «БАТОЛА» И ЕЕ СОВРЕМЕННЫЕ ВАРИАНТЫ

МАРГАРИТ САРГСЯН*

Для цитирования: Саргсян, Маргарит. "Песенная традиция обрядовой плясовой песни «Батола» и ее современные варианты". *Искусствоведческий журнал*, N 2 (2022): 104-128. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-104

«Батола» – древнейшая свадебная обрядовая плясовая песня, которую во время армянской традиционной свадьбы подружки новобрачной исполняли в «цветнике», т.е. в доме невесты. Позднее эта традиция была утрачена, и «Батола» стала исполняться во время различных увеселений по самым разным

* Научный сотрудник отдела народной музыки Института искусств НАН РА, margfolk63@gmail.com, статья представлена 29.08.2022, рецензирована 01.09.2022, принята к публикации 15.12.2022.

поводам. В наши дни «Батола» распространена на территории Армении и в Грузии, в регионе Джавахетия, с многочисленным армянским населением.

Плясовая *батол* узнаваема благодаря устойчивой метрической формуле дипирихий/амфимакар, благодаря чему прослеживается параллель с другой свадебной обрядовой плясовой – «Тамзара». Все примеры, рассмотренные в данной статье, представляют собой различные варианты одной и той же песни.

Ключевые слова: «Батола», обрядовая плясовая песня, ареал, название, поэтический текст, музыка, варианты.

THE SINGING TRADITION OF THE *BATOLA* RITUAL DANCE AND ITS PRESENT MODIFICATIONS

MARGARIT SARGSYAN*

For citation: Sargsyan, Margarit. "The Singing Tradition of the *Batola* Ritual Dance and its Present Modifications", *Journal of Art Studies*, N 2 (2022): 104-128. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-104

Batola is an ancient wedding ceremony dance song, which was performed by bridesmaids at the "flower garden" i.e., in the bride's house, during the Armenian traditional wedding. Later, this tradition was lost, and *batola* began to be performed during various festivities on different occasions. Nowadays, *Batola* is common in Armenia and in Javakheti region of Georgia, with a large Armenian population.

Batola is recognizable owing to the stable dipyrrichium/amphimacer metrical structure; therefore, there is a parallel with another wedding ceremonial dance song *Tamzara*. All examples considered in this work are different versions of the same song.

Key words: *Batola*, ritual dance song, area, name, poetic text, music, variants.

* Researcher at the Department of Folk Music of NAS RA Institute of Arts, margfolk63@gmail.com. The article has been delivered on 29.08.2022, reviewed on 01.09.2022, accepted for publication on 15.12.2022.

1. ԲԱՏՈՒԼԱ

(Ապարան)

Ս. Լիսիցյան, հ. 1, էջ 582

Երգ-ց՝ Անգին Աբրահամյան

Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 Դը - ռան ա - ռեջ գա - րի է,
 Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 Գաղ - քա - կա - նի տա - րի է,
 Շա - քա - րու շար Բա - տո - լո,
 Բա - տո - լա ջան, Բա - տո - լա:

Բատուլա ջան, Բատուլա,
 Դռան առեջ գարի ա,
 Բատուլա ջան, Բատուլա,
 Գաղթականի տարի ա:

Բատուլա ջան, Բատուլա,
 Կանաչ արտի քնարը,
 Բատուլա ջան, Բատուլա,
 Վառիւր սրտիս ֆանարը:

Բատուլա ջան, Բատուլա,
 Երկեր արտը փուշ կըլ՛նի,
 Շաքարու շար, Բատուլա,
 Կարճ երկարին թուշ կըլ՛նի:

Բատուլա ջան, Բատուլա,
 Խոսքս մերժող, ա՛յ աղջիկ,
 Բատուլա ջան, Բատուլա,
 Ինձ էլ դնից կհանես:

Բատուլա ջան, Բատուլա,
 Շաքարու շար, Բատուլա:

2. ԲԱՏՈԼԱ

Շիրակ

Երգասաց՝ Անահիտ Մառանջյան
 Չայնագր. և վերծ.՝ Մ. Սարգսյանի, 2009թ.

Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 Շա - քար ու շար - քաթ օ - լա,
 Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 Լուս - նակն ա - նուշ կը - ցո - լա:
 Աղ - ջիկ կայ - նե կար - մըն - ջին,
 Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 Օս - կե գըն - դեր ա - - - կըն - ջին,
 Շա - քար ու շար - քաթ օ - լա:

3. ԲԱԹ ՕԼԱ

գ. Քասախ (2001թ.)

Երգ.-ց՝ Բավական Մնացականյան

Բա - թո - լա ջան, բա - - - թո - լա,
 Շա - քյար ու շար - բաթ օ - լա,
 Գը - նա, գը - նա, գա - - լիս եմ,
 Բա - թո - լա ջան, բա - - - թո - լա,
 Քըր - տը - նած եմ, լա - լիս եմ,
 Շա - քյար ու շար - բաթ օ - լա:
 Ախ - չի, դու հուր ես, մուր ես,
 Բա - թո - լա ջան, բա - - - թո - լա,
 Ես ծա - բավ եմ, դու ջուր ես,
 Շա - քյար ու շար - բաթ օ - լա:
 Կայ - նա սա - թին, կու՜ն է - լա,
 Բա - թո - լա ջան, բա - - - թո - լա,
 Ե - թիմ տը - դին թու՜ն է - լա,
 Շա - քյար ու շար - բաթ օ - լա:

4. ԲԱՏՈՒԼԱ ՋԱՆ

Ապարան, գ. Մոավյան, (2001թ.)

Երգ.-գ՝. Խաչիկ Դավթյան

Կա - նաչ ար - տի քը - նա - րը,
Բա - տո - լա ջան, քա - տո - լա,
Վա - ոավ սըր - տիս ֆա - նա - րը,
Շա - քար ու - տող շան տը - դա:
Բա - տո - լա ջան, քա - տո - լա,
Շա - քար ու շար քա - տո - լա:
Կա - մաց քը - շեք սե - լե - րը,
Բա - տո - լա ջան, քա - տո - լա,
Կա - պեմ չող - քուս քե - լե - րը,
Շա - քար ու շար քա - տո - լա:
Գը - նա, գը - նա, գա - լիս եմ,
Բա - տո - լա ջան, քա - տո - լա,
Հե - տե - վի - ցըդ լա - լիս եմ,
Շա - քար ու - տող շան տը - դա:

5. ԷՆ ՍԱՐԸ ՄԵՁԻ, ՄԵՁԻ (Բատալո ջան, Բատալո)

Վասպուրական

գ. Ներքին Դվին, 1987թ.

Երգ-գ Արեգ Գասպարյան

$\text{♩} = 144$

$(2+2+2+3)$

Էն սա - րը մե - զի, մե - զի,

Բա - տա - լո ջան, բա - տա - լո,

Ձի - ա - վոր, մեռ - նեմ քե - զի,

Շա - քար ու շիր բա - տա - լո:

Տարբերակ

$(2+2+2+3)$

Էն սա - րը մե - զի, մե - զի,

Բա - տա - լո ջան, բա - տա - լո,

Ձի - ա - վոր, մեռ - նե - մը քե - զի - յի,

Շա - քար ու շիր բա - տա - լո:

Էն սարը մեզի, մեզի,
 Բատալո ջան, բատալո,
 Ձիավոր, մեռնեմ քեզի,
 Շաքար ու շիր բատալո:

Աղջի՛, արի բան ասեմ,
 Բատալո ջան, բատալո,
 Մազերդ մանդր ուսեմ,
 Շաքար ու շիր բատալո:

6. ԲԱՏԱԼՈ ՋԱՆ, ԲԱՏԱԼՈ

Վասպուրական

գ. Ներքին Դվին, 1987թ.

Երգ.-ց՝ Մերոբ Վարդանյան

$\text{♩} = 68$

Բա - տա - լո ջան, բա - տա - լո,

Շա - քար ու շիր բա - տա - լո:

Բա - տա - լո ջան, բա - տա - լո,

Շա - քար ու շիր բա - տա - լո:

Քան - ղիմ կառ - կա - ղի բու - նը,

Բա - տա - լո ջան, բա - տա - լո,

Ո - տըս կը - ծեց սն շու - նը,

Շա - քար ու շիր բա - տա - լո:

7. ԲԱՏԱԼՈ

գյուղ Վարդենիս (1964)

ՀՀ ԳԱԱ ԱԲԶ, Հ. Գրքաշարյանի ֆոնդ
S. 271, թ. 8, երգ.-ց Յազո Կոստանյան

Բա - տա - լո ջան, Բա - տա - լո,
Շա - քյար ու շար - բաթ օ - լա,
Ուր գը - նա - ցիր, ուր է - կար,
Բա - տա - լո ջան, Բա - տա - լո,
Դու իմ սրբ - տին դուր է - կար,
Բա - տա - լո ջան, Բա - տա - լո,
Բա - տա - լո ջան, Բա - տա - լո,
Շա - քյար ու շար - բաթ օ - լա:

2. Արի, արի չիմ յարբս,
Զեռ տու, պարիմ իմ յարբս:
Բատալո ջան, Բատալո,
Շաքյար ու շարբաթ օլա: } 2 անգ.

4. Արի գնանք մեր բաղը,
Բատալո ջան, Բատալո,
Երգիմ սիրածիս խաղը,
Բատալո ջան, Բատալո: } 2 անգ.
Շաքյար ու շարբաթ օլա:

3. Սարի արտը քաղ կանեմ,
Բատալո ջան, Բատալո,
Թշնամու սիրտ կղաղեմ,
Բատալո ջան, Բատալո:
Բատալո ջան, Բատալո,
Շաքյար ու շարբաթ օլա: } 2 անգ.

5. Ու՛ր գնացիր, ու՛ր էկար,
Դու իմ սրտին դուր էկար:
Բատալո ջան, Բատալո,
Շաքյար ու շարբաթ օլա: } 2 անգ.

8. ԲԱՏԱԼՈ

Վարդենիսի շրջան, գ. Ակունք (1964)

ԱԻՉ, Հ. Գրքաշարյանի ֆոնդ

S. 274, թ. 2, երգ.-ց՝ Նավոյան Աստղիկ

Մեր Բա - տա - լոն խի - վանդ ա,
 Շի - րին, շա - քար Բա - տա - լո,
 Էր - կու դար - չին, մի բամ - բակ,
 Շի - րին, շա - քար Բա - տա - լո,
 Բա - տա - լո ջան, Բա - տա - լո,
 Շա - քար ու շրր Բա - տա - լո,
 Բա - տա - լո ջան, Բա - տա - լո,
 Դար - չինը, մե - խակ Բա - տա - լո:
 Տա - րի նա - րի րա - րը րի րայ,
 Ռայ - նա րի - նայ նայ - նը նա - նայ,
 Ռայ - նի նի - նայ նա - րը նա - նայ,
 Ռայ - նա րի - նա նա - րը նա - նայ:

2. Երևան ուխտ իեմ արիե,
Բատալո ջան, Բատալո,
Թարսամըջուխտ եմ արիե,
Շիրին, շաքյար Բատալո,
Դոստ ու դուշմանի միջին,
Բատալո ջան, Բատալո,
Լացս ծիծաղ եմ արիե,
Բատալո ջան, Բատալո:

Բատալո ջան, Բատալո,
Շիրին, շաքյար Բատալո,
Տարի նի-նայ, րայ, նանայ,
Ռայնա րինա, նարը, րինայ,
Ռայնի րինա, նարը, նանայ,
Տայնա րանա, նարը, նանայ:

9. ԲԱՏԱԼՈ ՋԱՆ

ԱԻԶ, Բ. Քուշնարյանի ֆոնդ (1927-29թթ.)
Գեղարքունիք, Մարտունի

Բա - տա - լո ջա - ն, Բա - տա - լո, 3
Բա - տա - լո ջա - ն, Բա - տա - լո,
Գը - նա, ա - րի, ման ա - րի, 3
Բա - տա - լո ջան, 3 Բա - տա - լո,
Օ - րա - խի մեջ 3 յան ա - րի,
Բա - տա - լո ջան, Բա - տա - լո:

Սարի մըջի օձխերը,
Բատալո ջան, Բատալո,
Առնիս, լցնիս ծոցերը,
Բատալո ջան, Բատալո:

Ջրի մըջի ձրկները
Բատալո ջան, Բատալո,
Տանը մըջի մրկները,
Բատալո ջան, Բատալո:

(կրկնել I քառյակը լրիվ)

10. ԲԱՏՈՒՆ ԶԱՆ, ԲԱՏՈՒՆ*

ԱԻԶ, Բ. Քուշնարյանի ֆոնդ
(1927-29թթ.), Գեղարքունիք

$\text{♩} = 88$


Բա - տո - լո ջա - նը, Բա - տո - լո,
Ուր գը - նա - ցիր, ու - րը ե - կար,
Դուն ի - մը սը - րը - տի - նը դու - րը ե - կար,
Բա - տո - լո ջա - նը, Բա - տո - լո,
Ուր գը - նա - ցիր, ու - րը ե - կար,
Դուն ի - մը սը - րը - տի - նը դուր ե - կար:
Դամ, տի - րը, նա - րա, նի - րը, նա - րը, նա - նի,
Տի, նա - րի, նա - րի, նա - րի, տա - նայ, նա, նայ:
Գը - նա, ա - րի, ման ա - րի,
Խըն - ձոր քա - դեմ, յան ա - րի,
Բա - տո - լո ջա - նը, Բա - տո - լո,
Դուն ի - մը սը - րը - տի - կը, Բա - տո - լո:



Տայ, նա - րի, նա - րի, նա - րի, նա, նա, նայ, Տի, նայ, նամ,
տի - րի, նա - րա, նի - րը, նա - նայ, նամ:
Բա - տո - լո ջա - նը, Բա - տո - լո,
Շա - քյար ու շեր - բաթ օ - լա:
Տամ, տի - րը, նա - րա, նի - րը, նա - րամ, նայ - նամ,
Տայ, նա - րի, նա - րի, նա - րի, տա - րի, նայ - նայ:

11. ԲԱՏԱԼՈ

Մարտունի 2009, գ. Ծովասար
երգ.-ցներ Քնարիկ և Քարմիկ
Հակոբյաններ



Բա - տա - լո ջան, բա - տա - լո,
Շա - քյար շի - րին բա - տա - լո,
Ես Բա - տա - լոյ գոր - քից եմ,
Տվժանի գորքից եմ:
Տըժ - վը - ժա - նի գոր - քից եմ:

Բատալո ջան, Բատալո,
Շաքյար շիրին Բատալո:
Ես Բատալոյ գորքից եմ,
Տվժանի գորքից եմ:
Բատալո ջան, Բատալո,
Շաքյար շիրին Բատալո:
Մեր Բատալոն խիվանդ ա,
Երկու խնձորի բանդ ա:

12. ԲԱՏԱԼՈ

Վասպուրական

Պարերգի նվագարանային տարբերակի վոկալ կատարում

գ. Ներքին Դվին, 1987թ.

Երգ-ց Սերոբ Վարդանյան

$\text{♩} = 96$

13. ԲԱՏՈՒԼԱ

Անի (1981թ.)

Անիի շրջան, գ. Լանջիկ,
Երգ.-գ Անահիտ Հակոբյան

$\text{♩} = 200$

Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 Շա - քյար ու շար - բաթ օ - լա:
 - - - - -
 Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 - - - - -
 Շա - քյար ու շար - բաթ օ - լա:
 Ես ի՞նչ է - րի իմ յա - րին,
 Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 Գը - լուխ դը - րե չոր քա - րին,
 Շա - քյար ու շար - բաթ օ - լա:

Բատուլա ջան, Բատուլա,
 Շաքյար ու շարբաթ օլա:

(թուրքերեն խաղիկ) -----
 Բատուլա ջան, Բատուլա,
 (թուրքերեն խաղիկ) -----

Ես ի՞նչ էրի իմ յարին,
 Բատուլա ջան, Բատուլա,
 Գլուխ դրե չոր քարին,
 Շաքյար ու շարբաթ օլա:

14. ԲԱՏՈԼԱ

ԱԻԶ, Ս. Լիսիցյանի ֆոնդ, տ. 437ա

գյուղ Հոռոմ

Երգ.-ց Հերիքնազ Հարթենյան

$\text{♩} = 112$

Կա - քա - վը կայ - նազ քա - ռին,
 Բա - տո - լա ջան, քա - տո - լա,
 Կը - տու - ցը լի - քը՛ն ա - ռին,
 Շա - քար ու շար - քաթ օ - լա:
 Սա - րեն ի - ջազ ջուխ - տըմ - ը դոչ,
 Բա - տո - լա ջան, քա - տո - լա,
 մի - նը փըն - ջած, մի - նը՝ ոչ,
 Շա - քար ու շար - քաթ օ - լա:

Կաքավը կայնազ քարին,
 Բատոլա ջան, բատոլա,
 Կտուցը լիքը՛ն արին,
 Շաքար ու շարքաթ օլա:

Սարեն իջազ ջուխտըմ՝ ը դոչ,
 Բատոլա ջան, բատոլա,
 Մինը փնջած, մինը՝ ոչ,
 Շաքար ու շարքաթ օլա: